

# Gramm-Leach-Bliley Գաղտնիության ծանուցում Blue Shield of California Life & Health Insurance Company

Blue Shield of California Life & Health Insurance Company-ն (Blue Shield Life) գնահատում է, որ Դուք հանդիսանում եք մեր ապահովագրողը: Մենք լրջորեն ենք վերաբերվում Ձեր տվյալների գաղտնիությանը: Մեզ անհրաժեշտ են Ձեր անձնական տվյալները, որպեսզի կարողանանք Ձեզ տրամադրել մեր ապրանքներն ու հնարավոր լավագույն ծառայությունները: Այս ծանուցումը բացատրում է, թե ինչպես ենք մենք հավաքում, օգտագործում, տարածում և պաշտպանում Ձեր ոչ հրապարակային անձնական և ֆինանսական տեղեկատվության (NPI) գաղտնիությունը:

- Մենք չենք վաճառում Ձեր NPI-ը:
- Մենք չենք տրամադրում Ձեր NPI-ը երրորդ կողմի՝ մարքեթինգային նպատակներով օգտագործելու համար:
- Մենք Ձեր NPI-ը տրամադրում ենք միայն նրանց, ովքեր դրա կարիքն ունեն, որպեսզի օգնեն մեզ՝ Ձեզ տրամադրել մեր ապրանքներն ու ծառայությունները և պահպանել այն բիզնես հարաբերությունը, որ ունենք Ձեզ հետ:
- Մենք որևէ մեկին չենք բացահայտում Ձեր NPI-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրված է կամ պահանջվում է օրենքով:

## Ինչու և ինչպես ենք մենք հավաքում Ձեր NPI-ը

- Մենք հավաքում ենք այն տեղեկատվություն, որն անհրաժեշտ է՝
- Մեր ապրանքներն ու ծառայությունները Ձեզ տրամադրելու համար
- Ձեզ տեղեկացնելու մեր այլ հասանելի ապրանքների և ծառայությունների մասին
- Ձեզ սպասարկելու համար

Մենք հավաքում ենք Ձեր NPI-ը տարբեր եղանակներով և տարբեր աղբյուրներից: Օրինակ, մենք կարող ենք հավաքել.

- Ձեր անունը, հասցեն, ծննդյան ամսաթիվն ու վայրը, ժողովրդագրական այլ տվյալներ և բժշկական պատմությունը, որոնք առկա են դիմումի, անդամագրման և այլ ձևաթղթերի մեջ

- Տեղեկություններ Ձեր առողջական խնդիրների մասին, որոնք առկա են հայցերում կամ կորուստը ապացուցող ձևաթղթերում, ինչպես նաև Ձեր առողջապահական մատակարարներից
- Ձեր մասին ֆինանսական տեղեկություններ, օրինակ՝ ապահովագրական վճարումների պատմությունը՝ մեզ հետ կնքված Ձեր գործարքներից
- Տեղեկություններ Ձեր ֆինանսական, բժշկական և վարկային պատմության մասին, որոնք առկա են սպառողների վերաբերյալ հաշվետվություններ կայացնող գործակալություններում և ապահովագրական ծառայություններ մատուցող կազմակերպություններում

## **Ինչպես ենք մենք օգտագործում և բացահայտում Ձեր NPI-ը**

Մենք օգտագործում և բացահայտում ենք Ձեր NPI-ը մեր ապրանքների և ծառայությունների առնչվող նպատակներով, բայց միայն այնպես, ինչպես պահանջվում կամ թույլատրվում է օրենքով: Անհրաժեշտության դեպքում մենք օգտագործում ենք Ձեր NPI-ը և բացահայտում ենք այն այլ ապահովագրական հաստատություններին, առողջապահական խնամքի մատակարարներին և այլ երրորդ կողմերին՝ ըստ անհրաժեշտության Ձեր ինքնությունը ստուգելու, Ձեր ապահովագիրը հաստատելու և գնահատելու, հայցերը մշակելու, պատշաճ վճարում ապահովելու, նպաստները տնօրինելու և ապահովագրական այլ գործառնություններ իրականացնելու համար:

Մենք կարող ենք ապահովագրի առնչվող սահմանափակ NPI տրամադրել նրանց, ում Դուք նշանակել եք (Ձեր ներկայացուցչին) և/կամ ինչ-որ մեկին, որին Դուք հատկացնում եք Ձեր ապահովագրի նպաստները:

Մենք կարող ենք բացահայտել Ձեր NPI-ն այլ կազմակերպությունների, ներառյալ մեր դուստր ձեռնարկությունները, որպեսզի նրանք աջակցեն մեզ՝ մեր ապրանքներն ու ծառայությունները Ձեզ տրամադրելու և առաջարկելու հարցում:

Օրինակ, մենք կարող ենք տրամադրել Ձեր NPI-ը հետևյալ դեպքերում.

- Մատակարար, որը մեզ տրամադրում է հայցերի մշակման, վարչարարության, փաստաթղթերի պատրաստման և առաքման ծառայություններ
- Ձեր ապահովագրական միջնորդը, գործակալը, գրանցված ներկայացուցիչը կամ վերաապահովագրական ընկերությունը
- Աուդիտորներ, ովքեր վերանայում են մեր մատակարարների աշխատանքը և այլ անձինք,

որոնք ծառայություններ են մատուցում Ձեր ապահովագրի առնչությամբ

Նախքան Ձեր NPI-ի բացահայտումը, այս կազմակերպությունները պետք է գրավոր կերպով հաստատեն, որ պահպանելու և գաղտնի են պահելու Ձեր NPI-ը:

Մենք նաև կարող ենք բացահայտել Ձեր NPI-ը հետևյալ դեպքերում.

- Գործատուներ կամ այլ խմբեր (երբ նրանք վճարում են այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք Դուք ստանում եք մեզնից)՝ Ձեր ապահովագրությունը պահպանելու կամ մեր ծառայություններն ու գործառնությունները ստուգելու համար
- Ակտուարներ կամ հետազոտողներ՝ ուսումնասիրություններ անցկացնելու համար, բայց միայն այնքան ժամանակ, քանի դեռ NPI-ը չի տրամադրվել երրորդ կողմի
- Պետական կամ դաշնային կարգավորող մարմիններ, իրավապահ մարմիններ և պետական մարմիններ, ինչպես թույլատրվում կամ պահանջվում է օրենքով
- Անհրաժեշտության դեպքում այլ անձինք/ կազմակերպություններ՝ հայտնաբերելու, կանխելու կամ զեկուցելու խարդախությունը, էական խախտումները և այլ հանցավոր կամ վիրավորական գործողությունները

## **Ինչպես ենք մենք պաշտպանում Ձեր NPI-ը**

Մենք օգտագործում ենք երաշխիքներ, որոնք համապատասխանում են դաշնային և նահանգային օրենքներին՝ Ձեր NPI-ի պաշտպանության համար: Այդ երաշխիքները ներառում են.

- Վարչական երաշխիքներ, ինչպիսիք են քաղաքականությունը և ընթացակարգերը՝ սահմանափակելու այն դեպքերը, երբ աշխատակիցը կարող է մուտք գործել Ձեր NPI

- Ֆիզիկական երաշխիքներ, ինչպիսիք են արգելափակված ֆայլերը և սահմանափակ մուտքը դեպի այն տարածքներ, որտեղ պահվում է NPI-ը

- Տեխնիկական երաշխիքներ, ինչպես օրինակ համակարգչային ցանցի անվտանգությունը

NPI-ը հասանելի է միայն այն մարդկանց, ովքեր դրա կարիքն ունեն` օգնելու Ձեզ հետ ունեցած մեր սպասարկման հարաբերություններում:

Եթե Ձեր համագործակցությունը մեզ հետ ավարտվի, մենք կշարունակենք հետևել այս ծանուցման մեջ նկարագրված գաղտնիության քաղաքականությանը, քանի դեռ պահպանում ենք Ձեզ վերաբերող տեղեկություններ: Եթե մենք այլևս Ձեր տեղեկատվության կարիքը չունենանք, մենք դրանից կազատվենք անվտանգ եղանակով:

## **Ձեր NPI-ը մուտք գործելու և փոփոխելու**

### **Ձեր իրավունքը**

Այս բաժինը և ստորև ներկայացված «Շտկում» բաժինը վերաբերում են այն NPI-ին, որը մենք հավաքում ենք Ձեզ ապահովագրական ծածկույթ տրամադրելու նպատակով: Դրանք չեն վերաբերում այն NPI-ին, որը մենք հավաքում ենք հայցի կամ քաղաքացիական կամ քրեական դատավարության հետ կապված կամ դրանց ակնկալիքով:

Դուք կարող եք պահանջել մուտք գործել որոշակի NPI, որը մենք հավաքում ենք Ձեզ ապահովագրական ապրանքներ և ծառայություններ տրամադրելու համար:

Դուք պետք է գրավոր կերպով ներկայացնեք Ձեր հարցումը և ուղարկեք այն ստորև նշված հասցեով: Ձեր նամակի մեջ պետք է նշվի Ձեր անունն ամբողջությամբ, հասցեն, հեռախոսահամարը և ապահովագրի համարը: Հարցումն ստանալուն պես մենք Ձեզ կուղարկենք NPI-ի պատճենները: Մենք նաև Ձեզ կուղարկենք այն տեղեկատվությունը, որն առնչվում է Ձեր

NPI-ի բացահայտումներին, եթե ցանկանաք: Մենք կարող ենք Ձեզնից ողջամիտ վճար գանձել մեր պատճենահանման ծախսերը հոգալու համար:

Հարցման դեպքում մենք կնշենք նաև այն անձանց ինքնությունը, ում մենք բացահայտել ենք Ձեր NPI-ը (կամ որոնց մենք սովորաբար բացահայտում ենք NPI-ը):

### **Ձեր NPI-ի շտկումը**

Եթե կարծում եք, որ Ձեր մասին մեր ունեցած NPI-ը սխալ է, խնդրում ենք գրել մեզ: Ձեր նամակի մեջ պետք է նշվի Ձեր անունն ամբողջությամբ, հասցեն, հեռախոսահամարը և ապահովագրի համարը: Ձեր նամակում բացատրեք, թե ինչու եք կարծում, որ NPI-ը ճշգրիտ չէ: Եթե մենք համաձայնենք Ձեզ հետ, ապա կշտկենք NPI-ը և կտեղեկացնենք Ձեզ այդ մասին: Եթե ցանկանաք, մենք նաև կտեղեկացնենք ցանկացած անձի, ով կարող է սխալ NPI ստացած լինել մեզնից վերջին երկու տարվա ընթացքում:

Եթե մենք չհամաձայնենք Ձեզ հետ, ապա կտեղեկացնենք Ձեզ, որ մենք չենք կատարելու այդ շտկումը և կներկայացնենք մերժման պատճառ(ներ)ը: Եթե ցանկանաք, կարող եք հայտարարություն ներկայացնել նշելով այն NPI-ը, որը Դուք սխալ եք համարում, և պատճառ(ներ)ը, թե ինչու համաձայն չեք NPI-ը չշտկելու մեր որոշման հետ: Մենք Ձեր հայտարարությունը կկցենք վիճելի NPI-ին: Մենք կներառենք Ձեր հայտարարությունը ցանկացած ժամանակ, երբ բացահայտենք վիճելի NPI-ը: Եթե ցանկանաք, մենք նաև հայտարարությունը կտրամադրենք ցանկացած անձի, ում մենք բացահայտել ենք վիճելի NPI-ը վերջին երկու տարվա ընթացքում:

## Դուք ինչ-որ բան անելու կարիք ունե՞ք:

Քանի որ մենք տրամադրում ենք Ձեր NPI-ը միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է սպասարկել Ձեզ հետ մեր ունեցած համագործակցությունը, Դուք կարիք չունե՞ք «հրաժարվելու» կամ «մասնակցելու», ինչպես դա արել էք այլ ֆինանսական կամ ապահովագրական ընկերությունների դեպքում:

---

Գաղտնիության այս ծանուցումը վերաբերում է Blue Shield Life-ի ներկա և նախկին ապահովադիրներին: Blue Shield Life-ը Ձեզ կուղարկի Գաղտնիության ծանուցման պատճենը, երբ Դուք առաջին անգամ դառնաք մեր ապահովադիրը, ապա տարին մեկ անգամ, քանի դեռ Ձեր ապահովագրությունը շարունակվի մեզ հետ: Եթե Դուք խմբային ապահովագրության ծածկույթ ունենաք, մենք այս Ծանուցումը կուղարկենք խմբային ապահովագրի սեփականատիրոջը, ով այն պետք է տրամադրի Ձեզ: Դուք միշտ կարող եք վերանայել և տպել ընթացիկ Գաղտնիության ծանուցումը մեր կայքում՝ **bluesieldca.com**:

Եթե Ձեզ անհրաժեշտ է կապվել մեզ հետ այս Գաղտնիության ծանուցման առնչությամբ, խնդրում ենք զանգահարել մեզ **(888) 266-8080** անվճար հեռախոսահամարով, էլ. նամակ ուղարկել [privacy@blueshieldca.com](mailto:privacy@blueshieldca.com) հասցեին, կամ գրել մեզ՝ Blue Shield Life Privacy Office, P.O. Box 272540, Chico, CA 95927-2540 հասցեով: